№ 160 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 — 1899 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 № 160

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք չէինք էլ կասկածում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Օտար բառերը. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Շամախուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպական մամլից և գրականութիւնից։

ՄԵՆՔ ՉԷԻՆՔ ԷԼ ԿԱՍԿԱԾՈՒՄ

—

Անցեալ շաբաթ, «Մշակի» № 156-ի մէջ, մենք տպեցինք այն նամակը, որ Խոյից ուղարկել էր մեզ դօկտոր Ե. Լէպսիուս։ Պարտք ենք համարում այդ առիթով մի քանի խօսք ասել։

Անցեալ տարվանից մեզ գանգատներ էին հասնում Պարսկաստանում բացված գերմանական որբանոցի մասին. բայց մենք, թանգ համարելով քրիստոնեայ աշխարհի դէպի թիւրքահայերը ցոյց տուած քրիստոնէական կարեկցութիւնը՝ ամենայն զգուշութեամբ վերաբերվեցանք այդ տեղեկութիւններին. բայց դրանք, եթէ չենք սխալվում՝ լոյս տեսան «Մշակից» դուրս։ Հասարակութեան մէջ, ուրեմն, կային այդ գանգատները և մեղադրանքները, երբ մենք մօտ երկու ամիս առաջ մի թղթակցութիւն ստացանք, որ յայտնում էր, թէ դօկտոր Լէպսիուս եկել է Խոյ՝ որբանոցի գործերը քննելու համար։ Տեղ տալով այդ թղթակցութեան՝ մեր միտքն էր որ վերջապէս պարզվի ճշմարտութիւնը։ Եւ մենք հասանք մեր նպատակին։ Դօկտոր Լէպսիուս վերջ է դնում ամեն մի տարաձայնութեան իր նամակով։ Շատ գոհ ենք, որ Խոյի որբանոցը օրինակելի կացութեան մէջ է, և ցաւում ենք, որ յարգելի դօկտորը վշտացած է որբանոցի նախկին մի պաշտօնեայի արարքներից։

Նամակի մէջ մի կտոր կայ, որ մի քիչ վիրաւորական է մեզ համար։ Դօկտոր Լէպսիուս պարսիկ իշխանաւորների վկայութիւնն է բերում՝ ցոյց տալու համար, թէ գերմանական որբանոցը մի զուտ մարդասիրական գործ է։ Մենք երբէք չէինք էլ կասկածում, որ այդպէս չէ։ Եւ դրա համար մենք շատ հիմնաւոր փաստեր ունէինք։

Դօկտոր Լէպսիուսին մենք նոր չը պիտի յանձնարարենք մեր ընթերցողներին, քանի որ նա ամենքին շատ լաւ յայտնի մի յարգելի անուն է, մէկը այն սակաւաթիւ մարդասէրներից, որոնք դժբախտացած թիւրքահայերին նայեցին ոչ թէ քաղաքական կամ առևտրական տեսակէտից, այլ բուն քրիստոնէական գթասրտութեան աչքով։ «Մշակը» ժամանակին պատմել է դօկտոր Լէպսիուսի հռչակաւոր գրքի բովանդակութիւնը. արձանագրել է և արձանագրում է այն մեծ ջանքերը, որ նա գործ է դրել Գերմանիայում հայերին օգնելու համար։ Այդպիսի մի քրիստոնեայ գործիչի վերաբերմամբ ամեն մէկը բացի երախտագիտութիւնից մի ուրիշ զգացմունք չէր կարող ունենալ, և մենք չէինք կարող լինել այդ հանրածանօթ իրողութիւնը ուրացողներից։

Սկսած այն օրից, երբ քրիստոնէական գթասրտութեան բացած որբանոցները Կ. Պոլսի մի քանի հայ հրապարակախօսների և եկեղեցականների աչքի փուշը դարձան ու զանազան անուանարկիչ զրոյցների նիւթ եղան մամուլի մէջ՝ մենք, ամեն յարմար առիթից օգուտ քաղելով, ասում էինք, որ դա բացարձակ ապերախտութիւն է, որ չը պէտք է բամբասել մարդասիրութիւնը, քանի որ նրա նպատակն է կորբոտից ազատել թշուառ հայ երեխաներին, վերադարձնել մարդկութեան։ Մենք ասել ենք, որ քրիստոնեայ մարդասէրները հերոսութիւն են գործում, անհամար դժուարութիւնների յաղթելով՝ ապրեցնում են անհայր ու անմայր երեխաներին և այդպիսի վեհ գործը մեր մէջ պիտի բարի նախանձ գրգռէ և ոչ թէ կրօնական անտեղի նկատումների և վէճերի դուռ բանայ։

Եւ իրաւ։ Հաւաքել Գերմանիայի պէս մի երկրում, ուր գոնէ պաշտօնական շրջանները և ազգաբնակութեան մեծ մասը քնքոյշ զգացմունքներ չունեն հայերի վերաբերմամբ և ուր մեծարվում է մի քաղաքականութիւն, որ հայերի համար բոլորովին աննպաստ է,—հաւաքել մի այդպիսի տեղ երկու միլիոն մարկ և կազմակերպել մի նպաստամատոյց մարմին, որ այժմ 2000 հայ որբեր է խնամում—դա հերոսութիւն է, որ կատարել են դօկտոր Լէպսիուս և նրա ընկերները։ Այդ աջողութիւնը ձեռք են բերել նրանք՝ կռուելով հասարակական կարծիքի, բազմաթիւ հայատեաց լրագիրների դէմ, աշխատելով թէ՛ խօսքով և թէ գրչով պաշտպանել դժբախտների իրաւունքները, սովածի դատը։ Եւ եթէ այսօր մենք նորից յիշատակում ենք այս բոլորը՝ մեր միտքն է մեր սրտանց մեծարանքը յայտնելու այն մարդասիրութեան, որ ահագին տարածութիւններ է անցնում, անթիւ դժուարութիւններ է ոտնակոխ անում իր գեղեցիկ նպատակը իրական գործի մէջ մարմնացնելու համար։ Գերմանական և այլ նպաստամատոյց ընկերութիւնները, որոնք գործում են թիւրքահայերի մէջ և թիւրքահայերի համար բուն քրիստոնէական և մարդասիրական նպատակով՝ բոլոր ազնիւ, մարդասէր մարդկանց շնորհակալութիւնը պիտի վաստակեն և, կարող ենք համարձակ վկայել, արդէն վաստակել են։

Ահա ինչ էինք ուզում ասել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Ազգերի մէջ երևան են գալիս հանճարներ, որոնք փառաւորում են նրանց անունները, որոնք գեղարուեստի, գիտութեան հրաշալիքներ են ստեղծում և անմահութեան կոթողներ են կանգնում, ամբողջ աշխարհի հիացմունքը և անհուն երախտագիտութիւն են վաստակում։ Բայց միշտ հարց է մնում, թէ բարձր մտքի հրաշագործութիւնները արդեօք բոլոր մարդկութեան է մատչելի. արդեօք այդ երախտագիտութեան և հիացմունքի մէջ ամբողջ ժողովուրդներն են մասնակցում, թէ միայն դասակարգերը։ Զարմանալի է. միայն տօնախմբութիւններին, հանդիսաւոր ճաշկերոյթների և թափօրների ժամանակ են յիշում, թէ արդեօք հասարակ ժողովուրդն էլ ճանաչում է այն անմահներին, որոնց նուիրված են այդ հանդէսները։ Տօնում էին մեզ մօտ Պուշկինի ծննդեան հարիւրամեակը, և այդ ժամանակ հարցրին. ճանաչում է ժողովուրդը Պուշկինին։ Պատասխանը գոհացուցիչ չէր։ Այժմ Գերմանիայում տօնում են աշխարհահռչակ Գէօթէի ծննդեան 150-ամեակը, և նոյն հարցը այստեղ է դրված։ Այստեղ էլ պատասխանը գոհացուցիչ չէ մեծ մասամբ։ Բայց պէտք էր, որ գերմանական վերջին գիւղացին, վերջին բանուորը ճանաչած լինի Գէօթէին, քանի որ նրան ճանաչում են անթիւ ազգեր ու լեզուներ։ Գերմանիան աւելի մեծ կրթութիւն ունի, ժողովրդական լուսաւորութիւնը տարածված է ամեն տեղ։ Բայց այն, ինչ յայտնի դարձաւ Գէօթէի տօնախմբութիւնների միջոցին՝ չէ համապատասխանում գերմանական ազգի հռչակին ու համբաւին։ «Русскія Вѣдомости» լրագրի թղթակիցը, նկարագրելով Ֆրանկֆուրտի տօնախմբութիւնները՝ իբրև մի գեղեցիկ նորութիւն է յանձնարարում մեզ այն, որ հանդէսին մասնակցում էր և բանուորների մի բազմութիւն։ Ճիշտ է, ամեն մի գերմանացի դպրոցում լսել է իր մեծ բանաստեղծի անունը, անգիր է արել նրա ոտանաւորները, բայց հասկանալ նրան ամենքին չէ վիճակված։ Ահա այդ կողմից նորութիւն է բանուորների այն բազմութիւնը, որ եկել էր հանդէսին ոչ իբրև ամբոխ, որ սիրում է նայել հանդէսներին, այլ իբրև Գէօթէն ուսումնասիրած, նրա հոգին գիտակցաբար ըմբռնած մի խումբ, որ այդ զարմանալի յաղթութիւնը ձեռք է բերել ինքնակրթութեամբ, իր սեփական ջանքերով։

Նայեցէք, ասում է թղթակիցը, այդ 200 մարդկանց, որոնք հաւաքվել են Saalban փառահեղ շինութեան մէջ իրանց Գէօթէին պատուելու համար։ Տղամարդիկ սև սիրտուկներով, իսկ կանայք ոչ հարուստ, բայց լաւ կարած, երբեմն նաև սիրուն հագուստներով, գլխներին գլխարկ դրած և կրծքի վրա վարդեր ունենալով. նրանք աշխատում են եղեկտրական գործարանում, մեքենաների յետև. նրանք ճիշտ որ բանուորներ են. այդ հեշտ կարելի է նկատել նայելով նրանց ձեռքերին։ Կոշտ ձեռքերի տէր աշխատաւորներ են և խմբի երգիչները, որոնք Մէնդէլսօնի չքնաղ ձայներով ողբասիրական զորձ է։ Մենք երբէք չէինք էլ կասկածում, որ այդպէս չէ։ Եւ դրա համար մենք շատ հիմնաւոր փաստեր ունէինք։

Դօկտոր Լէպսիուսին մենք նոր չը պիտի յանձնարարենք մեր ընթերցողներին, քանի որ նա ամենքին շատ լաւ յայտնի մի յարգելի անուն է, մէկը այն սակաւաթիւ մարդասէրներից, որոնք դժբախտացած թիւրքահայերին նայեցին ոչ թէ քաղաքական կամ առևտրական տեսակէտից, այլ բուն քրիստոնէական գթասրտութեան աչքով։ «Մշակը» ժամանակին պատմել է դօկտոր Լէպսիուսի հռչակաւոր գրքի բովանդակութիւնը. արձանագրել է և արձանագրում է այն մեծ ջանքերը, որ նա գործ է դրել Գերմանիայում հայերին օգնելու համար։ Այդպիսի մի քրիստոնեայ գործիչի վերաբերմամբ ամեն մէկը բացի երախտագիտութիւնից մի ուրիշ զգացմունք չէր կարող ունենալ, և մենք չէինք կարող լինել այդ հանրածանօթ իրողութիւնը ուրացողներից։

Սկսած այն օրից, երբ քրիստոնէական գթասրտութեան բացած որբանոցները Կ. Պոլսի մի քանի հայ հրապարակախօսների և եկեղեցականների աչքի փուշը դարձան ու զանազան անուանարկիչ զրոյցների նիւթ եղան մամուլի մէջ՝ մենք, ամեն յարմար առիթից օգուտ քաղելով, ասում էինք, որ դա բացարձակ ապերախտութիւն է, որ չը պէտք է բամբասել մարդասիրութիւնը, քանի որ նրա նպատակն է կորբոտից ազատել թշուառ հայ երեխաներին, վերադարձնել մարդկութեան։ Մենք ասել ենք, որ քրիստոնեայ մարդասէրները հերոսութիւն են գործում, անհամար դժուարութիւնների յաղթելով՝ ապրեցնում են անհայր ու անմայր երեխաներին և այդպիսի վեհ գործը մեր մէջ պիտի բարի նախանձ գրգռէ և ոչ թէ կրօնական անտեղի նկատումների և վէճերի դուռ բանայ։

Եւ իրաւ։ Հաւաքել Գերմանիայի պէս մի երկրում, ուր գոնէ պաշտօնական շրջանները և ազգաբնակութեան մեծ մասը քնքոյշ զգացմունքներ չունեն հայերի վերաբերմամբ և ուր մեծարվում է մի քաղաքականութիւն, որ հայերի համար բոլորովին աննպաստ է,—հաւաքել մի այդպիսի տեղ երկու միլիոն մարկ և կազմակերպել մի նպաստամատոյց մարմին, որ այժմ 2000 հայ որբեր է խնամում—դա հերոսութիւն է, որ կատարել են դօկտոր Լէպսիուս և նրա ընկերները։ Այդ աջողութիւնը ձեռք են բերել նրանք՝ կռուելով հասարակական կարծիքի, բազմաթիւ հայատեաց լրագիրների դէմ, աշխատելով թէ՛ խօսքով և թէ գրչով պաշտպանել դժբախտների իրաւունքները, սովածի դատը։ Եւ եթէ այսօր մենք նորից յիշատակում ենք այս բոլորը՝ մեր միտքն է մեր սրտանց մեծարանքը յայտնելու այն մարդասիրութեան, որ ահագին տարածութիւններ է անցնում, անթիւ դժուարութիւններ է ոտնակոխ անում իր գեղեցիկ նպատակը իրական գործի մէջ մարմնացնելու համար։ Գերմանական և այլ նպաստամատոյց ընկերութիւնները, որոնք գործում են թիւրքահայերի մէջ և թիւրքահայերի համար բուն քրիստոնէական և մարդասիրական նպատակով՝ բոլոր ազնիւ, մարդասէր մարդկանց շնորհակալութիւնը պիտի վաստակեն և, կարող ենք համարձակ վկայել, արդէն վաստակել են։

Ահա ինչ էինք ուզում ասել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՄՏՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Վայտարի փոքրիկ դքսութիւնն այդ ժամանակ գերմանական մտքի և գեղարուեստի ամենափայլուն կենդրոնն էր ներկայացնում. Գէօթէից առաջ այնտեղ էր արդէն Վիլանդը, իսկ Գէօթէի դրդմամբ հրաւիրվեց և Հերդէրը, յետոյ Շիլլէրը, որին Գէօթէն սկզբում դեռ ճանաչում էր Ենայից միայն իբրև «պրոֆէսօր»։ Երկու մեծ բանաստեղծների մէջ առաջացաւ բարեկամական մի մտերիմ և իր տեսակում դեռ ևս չը տեսնված մի կապ, որ Շիլլէրի վաղաժամ մահովը միայն խզուեց։ Այս երկու հանճարեղ ժամանակակիցների բարեկամութիւնն այնքան բարձր, այնքան օրինակելի է, որ մենք կարևոր ենք համարում մի փոքր կանգ առնել դրա վրա։ Գէօթէն 10 տարով մեծ էր Շիլլէրից. աւելի հանճարեղ, ի հարկէ, և բազմակողմանի և մանաւանդ բոլորովին տարբեր պայմաններում ծնված և զարգացած. բայց չը նայելով այս երկու մեծ մարդկանց բնաւորութիւնների և գեղարուեստական ուղղութիւնների տարբերութեանը՝ նրանք շուտով հասկացան և գնահատեցին միմեանց փոխադարձաբար։ Մինչդեռ ժամանակակիցները կռիւ էին մղում վիճելով, թէ ով է ամենամեծ բանաստեղծը, Գէօթէն թէ Շիլլէրը, վերջինս խորին հաճեստութեամբ և ինքնաճանաչութեամբ ասում թէ ինչ է գրում իր բարեկամ Գէօրնէրին. «Գէօթէի հետ համեմատած՝ ես, իբրև բանաստեղծ, շատ չնչին բան եմ ներկայացնում։ Բոմանտիկական ուղղութեան նշանաւոր ներկայացուցիչներից մէկը, Նովալիս, մի անգամ «Վիլհէլմ Մէյստէրում» «Գեղարուեստական ամէիզմի» ոգի էր տեսնում՝ ահա թէ Շիլլէրն ինչ է գրում այդ նոյն երկի առիթով. «Իմ գոյութեան ամենասիրուն բախտաւորութիւններից մէկն էր, որ ես ականատես եմ այս ստեղծագործութեան գլուխ գալուն». իսկ «Հէրման և Դորոթէայի» լոյս տեսնելուց յետոյ «Գիտակցութեան բանաստեղծը»—(Շիլլէրին երբեմն այսպէս են անուանում Գէօթէի հետ համեմատած)—գրում էր իր մի ուրիշ բարեկամ Հ. Մայէրին. «Եթէ նրա (Գէօթէի) էպիքական բանաստեղծութիւնը կարդացել էք՝ պէտք է խոստովանէք, որ դա իր և առհասարակ ամբողջ նոր արուեստի գագաթնակէտն է», և յետոյ յայտնում է իր հիացմունքը Գէօթէի ստեղծագործական հանճարի առիթով. «Մինչդեռ մենք մի տանելի գործ արտադրելու համար երկար ժամանակ հաւաքելով և քննելով ենք զբաղվում՝ բաւական է, որ նա թեթև կերպով թափ տայ ծառը, և ահա նրա շուրջը հաւաքված են ամենասիրուն պտուղները»։

Նոյն անխարդախ և մաքուր զգացմունքը տածում էր նոյնպէս Գէօթէն դէպի իր բարեկամը. «Դուք ինձ երկրորդ երիտասարդութիւն շնորհեցիք, ասում է նա, և նորից բանաստեղծ դարձրիք, մինչդեռ ինձ թւում էր, թէ այլ ևս դադարել էի բանաստեղծ լինելուց». (որովհետև խորասուզվել էր բնագիտական-փիլիսոփայական ուսումնասիրութիւնների մէջ)։ Շիլլէրի մահվան գոյժը ոչ ոք չէր համարձակվում հաղորդել Գէօթէին, որովհետև նա էլ այդ ժամանակ մի փոքր տկար էր. մի անգամ նա նկատում է մի բարեկամուհուն. «Ինչպէս երևում է՝ Շիլլէրը ծանր հիւանդ պէտք է լինի». բարեկամուհին փոխանակ պատասխանելու զգածուած հեկեկում է. «Նա վախճանվել է», հարցնում է Գէօթէն նեարդային մի շեշտով. «Դուք ինքներդ ասացիք», պատասխանում է արտասուող բարեկամուհին։ «Նա վախճանվել է», ակամայ մրմնջում է նորից Գէօթէն և ծածկում իր խոնաւ աչքերը։ Նա կորցրել էր իր «Գոյութեան կէսը»։ Շիլլէրից յետոյ յաջորդաբար վախճանվում են Գէօթէի մայրը, կինը, մեծ դքսուհին, մեծ դուքսը և իր անդրանիկ և միակ կենդանի մնացած որդին. իսկ ինքը հանճարեղ բանաստեղծը փակում է իր աչքերը 1832 թ-ին մարտի 22-ին։ Գիտակցութիւնը կորցրած՝ նրա արտասանած վերջին խօսքերը լինում են «Mehr Licht!» (աւելի լոյս)։ Նա էլ վախճանվեց, ամենամեծը, բայց «ժամանակի անիւը նրա երկրաւոր օրերի հետքերը չէ կարող անհետացնել»։ Գէօթէի որդին Աւգուստը վախճանվեց 1830-ին Հռոմում, իսկ թոռները—Ալմա, Վալտէր և Վոլֆգանգ մեծ հոր մահվանից յետոյ դեռ ապրում էին։ Գէօթէի ցեղը վերջանում է 1855 թ. ապրիլի 18-ին, Վալտէրի մահովը։

—

Գերվինուսը իր նշանաւոր աշխատութիւններից մէկում նկատում է. «Մինչդեռ Կլոպշտոկը մեր Միլտոնն էր, Վիլանդը՝ մեր Վոլտէրը, Ժան Պաուլը մեր Շեէրը՝ Գէօթէն և Շիլլէրը մնացին միշտ այն՝ ինչ որ էին։ Բայց ինչումն է կայանում Գէօթէի մեծութիւնը, գեղարուեստական արժանիքը։ Գէօթէն արուեստի միակ աղբիւրը բնութեան և հին հելլենական տիպարներումն էր միայն որոնում։ Գուցէ ոչ ոք բնութիւնը իր հիասքանչ գեղեցկութեամբ և խորհրդաւորութեամբ այնքան խոր կերպով չը մտքռնեց, այնքան ազդու կերպով չը զգաց և այնքան հանճարեղ կերպով չարտայայտեց՝ ինչպէս Գէօթէն. կատարեալ իրաւունքով ասում են նրա մասին, թէ «բնութիւնը նրան ստեղծեց, որպէսզի կարողանայ նրա միջոցով ինքն իրան աւելի լաւ դիտել»։ Բայց ոչ միայն անկենդան, այլ և մարդկային բնութիւնը, հոգին, նա այնպիսի խոր վերլուծման ենթարկեց, որ բացի Շեքսպիրից ոչ ոքին դեռ չէր յաջողվել. մի չը տեսնված նրբազգացութեամբ և խորազնին դիտողութեամբ նա քրքրեց մարդկային հոգու ամենաթաքուն ծալքերը, լուսաւորեց ամենամութ ելևէջները և իր ոսկեկուռ քնարով մարդկութեան ականջին այդ հոգու ամենանուրբ թրթիռները հնչեցրեց։

Գէօթէն, ապագայ այս մեծ բէալիստը, իր կեանքում ունեցաւ բնականաբար և այն շրջանը, ուր ամեն մի զգայուն և արտաքին տպաւորութիւններից ալեկոծվող սիրտ լուսնին իր ջերմ ողջոյններն է յանձնարարում, ազատ թռչունները իրան պատգամատարներ է դարձնում, ծովի, ամպերի և փոթորկի հետ մտերմանում, խորհուրդներ է փոխանակում, մի խօսքով՝ ամբողջ անկենդան բնութիւնը ոգեորում, իր սեփական զգացմունքների հայելին դարձնում. դա այն բնութիւնն է, որի արշալոյսը ծիրանի շողերով ժպտում է մշտավառ կամ դալկացած, արիւնոտ արցունքներ է թափում, որի ծաղիկները լեռու առած հեզիկ բարբառում են...։

Այս շրջանի ամենազեղուն արտայայտութիւնը «Վէրթէրն» է, անբախտ սիրոյ այս ամենամեծ և ամենաժառայ վէպը, կամ աւելի ճիշտ ասած՝ իրականութիւնը։

Բայց երազուն և սանտիմէնտալ գծերը շուտ են անհետանում Գէօթէի բնաւորութիւնից։ Նա

ջունում են իրանց մեծ համաքաղաքացու յիշատակը: Նոյն-իսկ բանաստեղծութեան ներքածութեան հեղինակը, պատգամաւոր Շմիդտ, նոյնպէս նախկին բանուոր է:

Այդ սիրուն տեսարանը գեղեցիկ կերպով պատկերանում է այն ճառի մէջ, որ արտասանվում է բանուորների համար. ճառախօսն ասում է.

«Եթէ Գէօթէ ապրէր մինչև այսօրվայ օրը և գար տեսնելու, թէ ինչպէս իրան տօնում են Ֆրանկֆուրտում՝ նա ամենից շատ կը զարմանար, տեսնելով մեր ժողովը: Ի՞նչ մարդիկ են սրանք. ես չեմ ճանաչում, իմ ժամանակ այսպիսիներ չը կային, կասէր նա: Իր ամբողջ հանճարով հանդերձ՝ բանաստեղծը չէր կարող նախատեսել, որ կը գայ օր, երբ պրոլետարիատը բոլոր ջանքերը գործ կը դնէ, որպէսզի բարձրանայ դէպի իր ժամանակի կուլտուրան: Գէօթէ մեզ չէ ճանաչում, բայց մենք նրան ճանաչում ենք, մենք կարողութիւն ունենք գնահատելու նրա գրուածքների մէջ բովանդակված մեծ մտքերը և գեղեցկութիւնները: Յիսուն տարի առաջ, երբ բանաստեղծի ծննդեան հարիւրամեակին էր՝ ոչ անհնարին բան էր. այն ժամանակ նոր էին ծագում այն հասարակական յարաբերութիւնները, որոնց օգնութեամբ ժողովուրդը կարող էր պարզել իր ձեռքը դէպի քաղաքակրթութեան գանձերը»:

Եւ յիսուն տարվայ մէջ այսքան ժողովրդական առաջադիմութիւն: Այդ դասակարգը Գէօթէի ժամանակ ամբոխ էր, փողոցների, գինետների, անմիտ զուարճութիւնների մի տգէտ, հարստահարված հասարակութիւն. մի ամբոխ էր դա, որին արհամարհելը մի առանձին պարծանք էին համարում Գառնասի և Օլիմպոսի պաշտօնեաները: Բայց այժմ նա հանդէս է գալիս իբրև մտաւոր պահանջների և մարդկային իրաւունքների տէր մի պատրաստված բազմութիւն, որ արդէն մասնակցում է երկրի օրէնսդրական բարձրագոյն մարմնի մէջ, դիմում է իր ապագային հաստատուն յոյսերով: Գէօթէն, ճիշտ որ, այժմ չէր ճանաչի այդ մարդկանց. և Գէօթէն իր կենդանութեան ժամանակ շատ էլ չէ մտածել դրանց մասին, լինելով բարձր դասակարգի, օլիմպիական մարդ: Մենք ասացինք, որ Գերմանիայում այն հարցը, թէ որքան ժողովրդականացած է Գէօթէն՝ միանգամայն բաւարար պատասխան չէ ստանում: Բանուորների այս ժողովը, ինչպէս ասացինք, մի գեղեցիկ նորութիւն է, մի նշան, որ ցոյց է տալիս, թէ դեռ կատարելութեան չէ հասել ժողովուրդը: Դրա ապացոյցը այն է, որ Գերմանիայում էլ խօսում են, թէ Գէօթէն պղնձէ արձաններով չը պիտի անմահանայ, այլ նրանով, որ կը ժողովրդականանայ: Բանուորների ճառախօսը այդ ցանկութիւնը յայտնեց:

Արձան դնելը մենք չենք համարում մեծ մարդկանց պատուելու արժանաւոր միջոց. ուստի ասես որ արձաններ չեն դրել բրօնզից և մարմարիօնից, և արձանները չնչտ բան են ասում մարդին: Ցօնելու անհամեմատ լաւ միջոցն է՝ Գէօթէի գրուածքների էժանագին և կարևոր բացատրութիւններով լուսաբանված լիակատար հրատարակութիւնը, որպէսզի նրան կարելի լինի գտնել իւրաքանչիւր գերմանացու տանը, որպէսզի այն ահագին մեծամասնութիւնը, որի համար Գէօթէի լաւագոյն և խորիմաստ ստեղծագործութիւնները դեռ կնքված են եօթն կնիքներով՝ կարողանայ սքանչանալ և սովորել»:

Գերմանիայի պէս մի երկիր, որ հրատարակչական գործի փառաւոր հայրենիքն է, կարօտ է իր մեծ բանաստեղծի ժողովրդականացմանը: Այստեղից պարզ է, թէ ինչ ահագին դեր ունի կատարելու ժողովրդական գիրքը: Եւ երբ Գերմանիայում Գէօթէի հազարաւոր տեսակ-տեսակ հրատարակութիւնների մէջ պահանջվում է ժողովրդականը, մտածում են արդեօք հայերը, թէ որքան անհուն տարածութիւններով են բաժանված ամեն մի առաջադէմ ազգից: Նայենք մեզ—և ինչ ողորմելի դրութիւն կը տեսնենք: Ունենք, ճիշտ է, հանճարներ, բայց ունեցել ենք շնորհալի տաղանդաւոր մարդիկ, որոնք գրել են և մեր մէջ անուն են հանել իրանց գրիչով: Բայց ուր որոնենք նրանց: Ո՞վ է մտածել երբևիցէ, թէ հայ գրողի գործերը օգուտ կը տային մեր ժողովրդին՝ եթէ հանրամատչելի դառնային: Եւ մթէ միայն հայ գրողի գործերը... Մենք առհասարակ գիրք չունենք կարդալու: Ողբալի չէ՞ այս դրութիւնը:

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԸ

«Մշակ» № 143 կը քննադատէ «Բանասէրի» Բ. գրքին մէջ մեր յայտնած այն փափագը՝ թէ կուզենք զտուած մաքրուած տեսնել մեր լեզուն օտար բառերէ, որոնց գերի եղած են մեր հրապարակագիրներէ ոմանք:

Եւ կըսէ «Մշակ»—«Օտար բառեր կարող են լինել մի գրուածքի մէջ... սա մի անհրաժեշտութիւն է». ուրեմն հարկ չը կայ բառարաններ պատրաստել, այնպէս չէ: Այսու հանդերձ մենք այնքան խստապահանջ չենք. չենք վարանիր յայտարարելու թէ՝ այն օտար բառերն որոնց հայերէնները չը կան և թէ կարելի չէ հայերէն բառ մը յարմարցընել, պէտք է այն պարագային միայն գործածել նոյն օտար բառերը: Ներելի չէ երբէք արևմտեան Հայի մը համար, երբ սա գործածէ հետևեալ նախադասութիւնը. «հէլվաջիին խալբ բէշլիկը եութդուրմիշ ըրի» (կեղծ հինգնոցը քշեցի քաղցրավաճառին). ներելի չէ նոյնպէս արևելեան Հայի մը համար գործածելը հազար ու մէկ ռուսերէն, գերմաներէն և ուրիշ օտար բառեր, երբ անոնց հայերէնները կան: Համարենք թէ ես հայերէնէ զատ լեզու չեմ գիտեր. օր մը Թիֆլիսի մէջ հրատարակուող թերթերէն կամ թէ գրքերէն մէկը ձեռքս անցաւ, և հետևեալ հատուածը կարդացի. «ֆինանսների մինիստրութիւնը պարլամենտի արխիւում գտել է մի դոկումենտ». արդ՝ ինչ կարող եմ հասկընալ ես այս հինգ օտար բառերէ, ըսէք, կաղաչեմ. լաւ չէր ըլլար եթէ գրուէր—«Ելևմտից նախարարութիւնը խորհրդարանի դիւանատան մէջ գտել է մի յիշատակարան»: Եթէ թուրքահայը թուրքերէն բառերով «ճոխացնել» ուզէ մեր լեզուն, ռուսահայը՝ ռուսերէնով, պարսկահայը՝ պարսկերէնով և այլն, ուր պիտի երթայ մեր լեզուին վախճանը:

Թերևս առարկուի թէ մեր «հայերէն» անուանած լեզուն արդէն իր մէջ ունի բաւական ստուար քանակութեամբ օտար բառեր, որոնցմէ մաս մը հաւաքած ու հրատարակած է պրոֆէսոր Հիւբշման (Armenische Grammatik). բայց այն ժամանակ միայն փոխ առնված են այդ բառեր՝ երբ հարկ անհրաժեշտ նկատված է:

Արդ մասնաւորելով մեր խօսքը պ. Մալխասեանցի գրքին վրա,—Սեբէոսի պատմութիւնը և Մ. Խորենացի,—բնական է թէ չը պիտի մատնանիշ ընէինք այն եօթնու օտար բառերն՝ երբ անոնց հայերէնները գոյութիւն չունենային և նոյն իսկ պ. Մալխասեանց միևնոյն գրքին մէջ այդ բառերուն հայերէններն ալ չը գործածէր ուրիշ էջերում. օրինակի համար՝ էջ 3, տող 25 «սինխրոնիկ կանոն». էջ 6, տող 18 «սինխրոնիկ ցանկ». էջ 51, տող 22 «սինխրոնիկ ցանկ», և տող 24 «սինխրոնիզմ». Մինչդեռ երեք տող վերն ըսած է արդէն՝ «ժամանակակցութիւն (սինխրոնիզմ)». էջ 53, տող 4 «սինխրոնիզմ», և տող 6 «սինխրոնիկ», էջ 72, տող 16 «սինխրոնիզմ». էջ 86, տող 24 «սինխրոնիկ»: Ասոնց հակառակ էջ 19, տող 5 կայ՝ «համաժամանակ ցանկ». էջ 51, տող 2 «համաժամանակ», և տող 25 «համաժամանակ» նոյնպէս:—Ուրիշ օտար բառ մըն ալ կայ առաջաբանում, էջ Ե, տող 6 «տենդենցիա», որ կը նշանակէ «միտում, ձգտում». արդ ինչ անյարմարութիւն կը տեսնէք դուք գործածելու մէջ այս «ձգտում» կամ «միտում» բառը, փոխանակ օտարանշիւն և խորթ տենդենցիա բառի:

Աշխատենք փրկել մեր լեզուն գոնէ:

Պ ա բ է զ. Կ. Ց. Բասմաջեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Օգոստոսի 28-ին

Ահա մի քանի օր է, որ Ալէքսանդրօպօլը իր շրջակայքով ներկայացնում է մի պատերազմական դրութիւն: Տեղի ունի մի նշանաւոր զօրախաղ, որին մասնակցում են 32 զօրագնդեր: Երէկ և այսօր հասնում էր մեզ Մօլլա-Մուսա և Դահարլի գիւղերի մօտ տեղի ունեցող խաղերի թնդանօթների որոտը: Երկու օրից յետոյ հերթը կը հասնի Ալէքսանդրօպօլի բերդի նուաճմանը, որով և կը վերջանայ այս նշանաւոր զօրախաղը, որի նմանը, ինչպէս ասում են՝ տեղի է ունեցել միայն 1872 թուականին, վերջին ռուս-թիւրքական պատերազմից մի տարի առաջ:

Այս օրերս համարեա վերջացաւ մեր գաւառի հացաբոյսերի հունձը, մեր առջև պարզելով մեր դրութեան ամբողջ ծանրութիւնը: Գաւառի լեռնային մասերում բերքը միջակից ստոր է, իսկ դաշտային մասերում կատարեալ անբաւարար: Այժմեանից կարելի է տեսնել խեղճ գիւղացուն քաղաքների չուկաներում ցորեն և ալիւր գնելիս: Ի՞նչպէս պէտք է նա անց կացնէ մեր կողմերի դաժան ու երկարատև ձմեռը. ինչով պէտք է պահէ իր ընտանիքը, առա այն հարցերը, որոնցով ոչ ոք չէ հետաքրքրվում... միայն ինքն է, գիւղացին, որ մարդկանցից ու Աստուծուց յոյսը կորած՝ դիմում է յուսահատական միջոցների... Գ. Մ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Օգոստոսի 24-ին

Կալը-կուտը սկսվել է նաև քաղաքում. հացի արդիւնքը այնքան չէ ստացվում, որքան սպասվում էր, ուստի հողագործների յոյսերը, որ սկզբում ունէին այս տարվայ առատութեան վրա՝ ոչ մի կերպով չարդարացան: Թէ անցեալ և թէ այս տարվայ երաշտութիւնից հացաբոյսը սաստիկ վնասվել է.—հասակը կարճ, 4—5 վերշոկ բարձրութեամբ, նօսր, հասկերը վատ, մրոտ, մի խօսքով՝ այն աստիճան անբաւարար, որ հացաբոյսը գերանդիով քաղել անգամ անկարելի է լինում, այլ հունձը կատարվում է ձեռքով. ծղօտները մէկ-մէկ փետում են գետնից, դժոխային չարչարանքներ կրելով:

Բացի այն, որ «փետոնը» շատ ժամանակ է խլում՝ նաև շատ աշխատող ձեռքեր և աւելորդ ծախսեր է պահանջում: Օրինակ, մի օրավար տարածութիւն (1/4 դեսեատին կամ 600 քառակուս սաժէն) բռնող արտը, որը ուրիշ տարիներ գերանդիով հնձվում էր մի օրում մի բանուորով՝ այս տարի 10 հոգուով հազիւ մի օրում փետվում է ձեռքով, որի համար ծախս է լինում աւելի քան 5 ր., փետողների օրավարձը և նրանց կերը հաշվելով: Փետոնին մասնակցում են 6—7 տարեկանից սկսած՝ կին, երեխայ, աղջիկ, ծեր և պառաւ: Շատ ընտանիքներ, որոնք 8—10 վերստ հեռու արտեր ունեն, երեկոյեան տուն չեն վերադառնում, այլ գիշերում են հանդում, որպէսզի միւս առաւօտը վաղ սկսեն աշխատանքը: Կանայք մինչև անգան իրանց հետ արտն են տանում ծծկեր մանուկներին և ճօճանակ կապելով սայլից՝ օրօրում են: Անցեալ օրերին հանդում մի յղի կին ծնել էր, փետելու միջոցին:

Այս տարի քաղաքի շատ արտեր մնացել են անցան, որովհետև անցեալ տարվայ երաշտութեան տակ հողը այն աստիճան կոշտացել էր, որ գարնանը ցանելիս անկարելի էր լինում «չորոցով» վարել, իսկ գութանով հերկել, ինչպէս լսեցի՝ քաղաքային վարչութիւնը թոյլ չէր տուել: Ցորեն ցանած մի «չվան» (տեղական չափ, հաւասար 400 քառակուսի սաժէնի) տեղը արտադրում է ամենաշատը 20 խուրձ, որից ստացվում է 3—4 պուդ հացահատիկ միայն: Այդ արդիւնքը ոչնչով չէ վարձատրում հողագործների դժոխային անտանելի աշխատութիւնը մի ամբողջ տարեշրջանի համար: Իսկ շատ դաշտ գրողը պատասխանում է. «Պարոններ, ծանօթ է ձեզ այն մարդու պատմութիւնը, որ ցանկանում է արևը երկնքից ցած իջեցնել, որովհետև անկարող էր իր ծխախոտը նրանով վառել»: Այս սրամիտ և փոխաբերական նկատողութիւնից յետոյ, լսողները խորին լռութիւն էին պահպանում:

Մի քանի մոլեռանդ համայնքներ և թերթեր դեռ մինչև այժմ շարունակում են Գերմանիայի ամենամեծ բանաստեղծի վերաբերմամբ քոթոթի դեր կատարել. բայց այսպիսի յարձակումներ, ի հարկէ, ոչ մի նշանակութիւն չունեն, որովհետև Գէօթէի հեղինակութիւնը և մեծութիւնը վաղուց է գտել իր անխորտակելի և անեղծանելի պատուանդանը. դա լաւագոյն Գերմանիայի և առհասարակ ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան սիրտն է:

Վերջացնում ենք մեր խօսքը Գէօթէի ամենամեծ յարգողներից մէկի, Քարլայլի հետևեալ գեղեցիկ տողերովը. «Նա բարոյապէս մեծ է, որովհետև նա եղաւ իր դարու համար այն՝ ինչ-որ ուրիշ ժամանակներում շատերը ձգտում էին լինել—մի կ ա տ ա ր ե ա լ մ ա ր դ. մի իսկական բնաւորութիւն—ահա նրա մեծութիւնը: Ինչպէս նա փայլում էր իր մտքովը, խորութեամբ և ընկալակայութեան ուժով՝ այնպէս էլ արդարասիրութիւնը նրա առաջին առաքինութիւնն էր. մենք հիանում ենք նրա հսկայական ոյժի առաջ, բայց մի ոյժ՝ նուրբ ընքշութեամբ ազնուացած. ամենամեծ սիրտը միևնոյն ժամանակ ամենաբարին էր, անվեհեր, անխոնջ և անընկճելի»: W.

Լ ո զ ա ն.

յետոյ սուր կերպով հեգնում էր բոմանտիկական ուղղութիւնը, չը խնայելով նոյն-իսկ իր սեփական ստեղծագործութիւնները:

Եթէ փոքր ինչ խորը գնանք՝ կը տեսնենք, որ Գէօթէի դէպի բնութիւնը տածած հիացմունքը ոչ միայն դատարկ հիացմունք, ոչ միայն մի քաղցրահնչիւն օրհներգ է, այլ և ներքին մի ուժեղ համակրանք—սէր է. նրան շրջապատող բնութիւնը օտար չէ, այլ այնքան մօտ, այնքան մտերիմ նրան՝ որքան իրանք կենդանի մարդիկ, և բնութիւնը նրա համար նոյն աստուածութեան ծնունդն է՝ որից առաջացել են և իրանք մարդիկ. բնութիւնը և մարդկութիւնը ձուլվում են ի մի: Գէօթէն այստեղ երևան է գալիս իր պանթէիստական խորին դաւանանքով: Այս պանթէիստական հակումն է, որ լցնում է նրա սիրտը մի անյագ տենչանքով—տիեզերքի անեզր բարձրութիւնները, հեռաւոր չափերն ընդգրկել: «Ա՜խ, ինչու՞ ես թևեր չունեմ, որ կարողանայի այս հողային մակերևոյթից վեր սլանալ, միշտ և միշտ ձեզ (մայր մտնող արեգակի ճառագայթները) հետևել... յաւիտենական վերջալույսի մէջ ես տեսնում եմ խաղաղ տիեզերքը իմ ոտների տակ, բարձր կատարները հրաբորբոք, հովիտները խաղաղ, արծաթափայլ աղբիւրը առատահոս լողալիս...»: Բայց կարօտի այս թախծալի բացագանչութեան հետ միասին՝ Գէօթէն Ֆաուստի բերանով երգում է նաև գոհունակութեան հանդիսաւոր մաղթանքը. «Բարձրագոյն ոգի, դու շնորհեցիր ինձ ամեն ինչ. դու տուիր ինձ սքանչելի բնութիւնը, ոյժ այդ զգալու և ճաշակելու. դու ցոյց տուիր ինձ կենդանի թագաւորութիւնը և սովորեցրիր ինձ խաղաղ առուակի, օդի և ջրի մէջ իմ եղբայրները ճանաչել»:

Ճիշտ այս նոյն ոգով Բայրընն է աղաղակում. «Ապառաժը և երկնային ճառագայթը մթթէ իմ կտորը չեն»: Ժան-Ժակ Ռուսսոն նոյնպէս մի անսահման հիացմունք է զգում դէպի բնութիւնը, բայց նրա պէսիմիստ հայեացքից մի ակնթարթ անգամ չէ անհետանում բնութեան և կուլտուրայի մէջ եղած հակասութեան ուրուականը: Այն-ինչ Գէօթէն իր տեսակէտներն ընդհանուր աշխարհայեացքի շնորհիւ ազատ է այս ուրուականի ներկայութիւնից: Ընդհակառակն Գէօթէի մեծութիւնը հէնց նրանումն է կայանում, որ նա ներկայացնում է բնութեան և մարդկային ոգու մարմնացած ներդաշնակութիւնը՝ թէ կեանքումը և թէ իր ամենալաւ ստեղծագործութիւններում: Եւ երբ Նապոլէօնը Էրֆուրտում նրա հետ մի ժամից աւելի տեսակցելուց յետոյ հիացած բացագանչում էր. «Voilà un Homme!»—հէնց այդ ժամանակ էլ նա միանգամայն արժանի էր այս բացագանչութեանը:

Բոմանտիկաներն վաղանցուկ շրջանից յետոյ՝ մենք տեսնում ենք, թէ ինչպէս նա կամաց-կամաց դառնում է առողջ ռէալիզմի կամ աւելի ճիշտ ասած՝ ռ է ա լ-ի դ է ա լ ի զ մ ի—գեղարուեստի այս ամենաբարձր ուղղութեան ներկայացուցիչը: Նա հետզհետէ մօտենում է հելլենական բանաստեղծութեան իդէալին. նրա բանաստեղծութիւնները աւելի օբեկտիվ, պարզ և միևնոյն ժամանակ աւելի խոր բնաւորութիւն են ստանում:

Փոխանակ բոմանտիզմի միօրինակ և խեղդող մթնոլորտում տարուբերվելու և իր գեղարուեստական բանականութիւնը զգացմունքների կամայական խաղի մէջ փնտռելու՝ նա դառնում է կեանքը և բնութիւնը դիտող և իրականը պատկերացնող: Ամեն մի արուեստագէտի զարգացման ընթացքում սա այն կէտն ու ճանապարհն է, որ առաջնորդում է դէպի այսպէս կոչված ընդհանուր աշխարհայեացքը: Գէօթէն վստահ և հսկայական քայլերով անցաւ այս ճանապարհը և շնորհեց մարդկութեան աւելի մեծ և աւեթանկագին աւանդ—հանրամարդկային, տիեզերական աշխարհայեացք. «Ֆաուստի» առաջին մասի հիմնաքարը կազմող անհատականութեան արագամեռիչ և անսանձ յոյզերին յաջորդում է երկրորդ մասը—սոցիալական սկզբունքի և ընդհանուր մարդասիրութեան աւետարանը:

Շատերը, որոնք թէ գեղարուեստի և թէ բուն հայրենասիրութեան մասին շատ դեղ և սահմանափակ հասկացողութիւն ունեն՝ դատապարտում են Գէօթէին, թէ ինչու նա իր ժամանակի ոգու համեմատ իր հանճարը «ազգային» շահերին չը ծառայեցրեց, ինչու հայրենասիրական և պատերազմական երգեր չը հեղինակեց: Գէօթէն նկատում է այս առիթով. «Պատերազմական երգերը երբէք չեն յարմարի ինձ, որովհետև ես պատերազմական բնաւորութիւն չունեմ. իսկ եթէ այսպիսի երգեր յօրինէի՝ պէտք է դիմակաւորվէի, այն-ինչ ես իմ բանաստեղծութիւնների մէջ երբէք կեղծ զգացմունքներ չեմ դրել. ես ստեղծել եմ միայն այն՝ որով այրվել, եռ եմ եկել. ինչպէս կարող էի ես ատելութեան երգեր շարադրել՝ առանց ատելութեան զգացմունքի»:

Լիւիս, Գէօթէի անգլիացի կենսագիրը՝ Քարլայլից անձամբ լսել է և հաղորդում է հետևեալ հետաքրքիր պատմութիւնը. մի անգամ Քարլայլը Բերլինում, մի քանի մարդկանց շրջանում, լսում է դանգատ Գէօթէի «անկրօնութեան» դէմ և առհասարակ անբաւականութիւն, որ նա արուեստը քրիստոնէական ճշմարտութեանը չը ծառայեցրեց: Փոքր ինչ լռելուց յետոյ տաղանդաւոր գրողը պատասխանում է. «Պարոններ, ծանօթ է ձեզ այն մարդու պատմութիւնը, որ ցանկանում է արևը երկնքից ցած իջեցնել, որովհետև անկարող էր իր ծխախոտը նրանով վառել»: Այս սրամիտ և փոխաբերական նկատողութիւնից յետոյ, լսողները խորին լռութիւն էին պահպանում:

Մի քանի մոլեռանդ համայնքներ և թերթեր դեռ մինչև այժմ շարունակում են Գերմանիայի ամենամեծ բանաստեղծի վերաբերմամբ քոթոթի դեր կատարել. բայց այսպիսի յարձակումներ, ի հարկէ, ոչ մի նշանակութիւն չունեն, որովհետև Գէօթէի հեղինակութիւնը և մեծութիւնը վաղուց է գտել իր անխորտակելի և անեղծանելի պատուանդանը. դա լաւագոյն Գերմանիայի և առհասարակ ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան սիրտն է:

Վերջացնում ենք մեր խօսքը Գէօթէի ամենամեծ յարգողներից մէկի, Քարլայլի հետևեալ գեղեցիկ տողերովը. «Նա բարոյապէս մեծ է, որովհետև նա եղաւ իր դարու համար այն՝ ինչ-որ ուրիշ ժամանակներում շատերը ձգտում էին լինել—մի կ ա տ ա ր ե ա լ մ ա ր դ. մի իսկական բնաւորութիւն—ահա նրա մեծութիւնը: Ինչպէս նա փայլում էր իր մտքովը, խորութեամբ և ընկալակայութեան ուժով՝ այնպէս էլ արդարասիրութիւնը նրա առաջին առաքինութիւնն էր. մենք հիանում ենք նրա հսկայական ոյժի առաջ, բայց մի ոյժ՝ նուրբ ընքշութեամբ ազնուացած. ամենամեծ սիրտը միևնոյն ժամանակ ամենաբարին էր, անվեհեր, անխոնջ և անընկճելի»: W.

Լ ո զ ա ն.

արտեր մնում են չը հնձած, բոլորովին փչացած լինելու պատճառով: Այդպիսի հողատէրերը, ինչպէս շատերը նկատում են՝ ուրախ կը լինէին, եթէ նրանց հողերը մնացած լինէին անմշակ, անցան, որովհետև գոնէ սերմը աննպատակ և անարդիւնք չէր կորչի:

Անցեալ յուլիսի 28/29-ին տեղացող անձրևախառն կարկուտը մի քանի արտեր փչացրեց քաղաքում: Կարկտահար արտերի տէրերը մտադիր են նորից հերկել և առանց սերմի փակել՝ իբրև աշնցան, գալող տարի բուսնելու համար: Դա լաւ միտք է, որովհետև կարկտահար հասկերը բոլորը թափվել են գետնի և կարող են ծառայել սերմի տեղ: Բայց սակայն այդ հանգամանքը շատերին կասկածելի է թւում, քանի որ տեղի դիրքը և կլիման անհամապատասխան են առհասարակ աշնցանի համար: Բայց և այնպէս փորձել անհրաժեշտ է:

Գ. Սինանեանց

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Օգոստոսի 25-ին

Գարնանային յորդ անձրևներից յետոյ ամբողջ ամառվայ ընթացքում այստեղ ոչ մի կաթիլ անձրև չեկաւ: Ցանքսերը շատ տեղ փչացան. փչացան նաև բանջարանոցների և ագարակների բերքերը, իսկ այժմ փչանում են խաղողի այգիները: Այդ բոլորը մեր գաւառի գիւղացի ժողովրդին հասցրեց կատարեալ յուսահատութեան: Շարունակ սև անձրևաբեր ամպերը կուտակվում են երկնքի վրա, օդի մէջ նկատվում է փոփոխութիւն, կարծում էք թէ ահա շուտով հեղեղ պիտի գայ: Փչում է քամին, լսում է որոտ, երևում է կայծակ... բայց դաժանացած երկինքը նորից խաբում է ձեռները դէպի երկինք բաձրացրած, Աստուծու գութը խնդրող մարդկանց: Ջրաղացները կանգնած են. հէնց այդ պատճառով էլ ալիւրի գինը օր օրի վրա բարձրանում է: Եթէ Բագուից մեծ քանակութեամբ ալիւր չը բերէին՝ անբևակայելի թանգութիւն պիտի տիրէր:

Սա երրորդ տարին է, որ Շամախու աղքատ ժողովուրդը ուժասպառ դառած սպասում է նոր ցորենի հետ նոր և էժան գների. բայց գնալով տարի տարու վրա նա աւելի է թանգանում: Ցուսահատութիւնը ընդհանուր է: Շատ շատերը անկարող լինելով տանը հաց թխել, որովհետև իւրաքանչիւր թոնիրը 4—5 ռուբլի ծախս է պահանջում՝ ստիպված են աւելի թանգ գնով մաս-մաս փուռից գնել, բայց մինչև կէսօր քաղցած մնալու պայմանով, մինչև որ իրանց ևս հերթ հասնէ:

Բոլոր ազգերի հոգևորականները մաղթանքներ, թափօրներ կատարեցին. բայց քնութիւնը կարծէք երդվել է չը զիջանել մարդկանց աղաչանքներին, մինչև որ կատարեալապէս վրէժառու չը լինի: Ահա նորերս միայն երկու անգամ անձրևեց, բայց արդէն ուշ էր:

Զը տեսնված տօթերը առաջացրին նաև մի քանի տեսակ հիւանդութիւններ, որոնք առանց զոհերի չեն անցնում: Ժողովրդի այդ անբարեյաջող դրութեան մէջ, երբ նա ուտելու անգամ հաց չունէ, մի կողմից էլ հարկերն են եռանդուն ժողովում: Այդ բոլորից յետոյ հեշտ է մտածել, որ այսպիսի անբարեյաջող հանգամանքները անշուշտ իրանց ներգործութիւնը պիտի ունենան և առևտրի վրա, որ գրեթէ կանգ է առել:

Քաղաքային վարչութիւնն ամեն ամառ մի երկու փողոց էր ջրել տալիս. այս տարի ջրի սակաւութեան պատճառով այդ էլ չեղաւ, և ժողովուրդը, ժանտանդ ամառանոց եկողները, առատ փոշի կուլ տալով՝ շարունակ տրտնջալով մնացին: Ակամայ մտաբերում ենք ժողովրդի այն խօսքը, որ ասում է «մանէեան (նզովք) այն դժբախտութիւններին, որոնք տասը տեղից չեն շրջապատի մարդուն»:

Քառասուն տարվայ անմշակ մնացած, բայց բերրի քաղաքապատկան հողերից քաղաքային վարչութիւնը մօտ 300 դեսեատին ամա երկու տարի է, որ աճուրդով տալիս է վարելու, և իւրաքանչիւր տարի մօտ 40,000 պուդ ցորեն է մտնում շուկայ, որ անշուշտ իր ներգործութիւնը պիտի ունենայ տիրող գնի վրա: Այդպիսով, ի հարկէ, համ քաղաքն է օգտվում, համ սպառող ժողովուրդը, համ էլ երկրագործը: Բայց այժմ դա չնչին օգնութիւն է. աւերակների վրա նստած յուսահատ Շամախեցուն լուրջ կերպով է հարկաւոր օգնել: Թող քաղաքային վարչութիւնը գոնէ մտածէ այդ մասին:

Մի քանի ամիս առաջ քաղաքային խորհուրդը որոշեց բանալ Պուշկինի անունով գրատունընթերցարան. բայց դեռ ոչինչ արված չէ. սպասում ենք որ խօսքից գործին անցնեն:

Ընդհանրապէս տխուր է, բթացնող է քաղաքի կեանքը թէ արտաքին և թէ ներքին իր պատկերով: Մի կտոր հացը—ինչպէս տեղացիները իրանք են ասում—ձիւաւոր է եղել, չէ ճարվում: Եւ դա առաջացրել է այն մեծ և անընդհատ դաղթականութիւնը, որի պատճառով 1000 տուն հայ ժողովրդից, այսօր մնացել է հազիւ 300 տուն. նրանց էլ մի մասը գիւղացի դաղթականներն են: Ոչ մի մտաւոր շարժում, ոչ մի կենդանութեան նշոյլ. աննշան փորձերի դիմաց էլ կանգնած են զանազան արգելքներ: Երիտասարդութիւն իսպառ չը կայ. եղածների աչքերի մէջ յուսահատութիւն, աշխոյժի բացակայութիւն է տիրում: Փոքրիկ մանուկները ոտաբոբիկ թափառում են փողոցներում: Տեղ չը կայ կարդալու: Ապագայ քաղաքացիների տխուր պատկերը այժմեանից կարելի է լինում դուշակել: Բողոքականներն էլ յարմար առիթ են գտել իրանց ուսումնարանի «ժաղանդան» թանգացնելու լուսաւորչականների վերաբերմամբ: Ինչու՞ չօգտվեն...

Շամախեցիների այս և սրանց նման շատ թշուառութիւնների պատճառը այն է, որ նրանք Ցովնան մարգարէի երեք օր կէտ ձկան փորումմնալու և նման հարցերի յետևից են ընկնում: Եթէ շամախեցիները փոխանակ զանազան վէճերով զբաղվելու գոնէ կէս չափով էլ զբաղված լինէին իրանց մտաւոր և տնտեսական առաջադիմութեան խնդիրներով՝ այժմ անկասկած նրանք բարոյականի մէջ էլ այն հրէշ պատկերը չէին ներկայացնի, որին այսօր հասել են կրօնական անիմաստ և աւերող պայքարների շնորհիւ: Բայց միամիտ ամբոխը անմեղ է: Մի կտոր հացի համար ժողովրդի թշուառութեան պատճառ եղող այդ յանցաւորներին պիտի որոնել զանազան ֆանատիկոս «ապէր»-ների և յետին մտքերի խաղալիք դարձած իբր թէ ժողովուրդ ղեկավարողների մէջ:

Ս. Սարգիսբէկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի քանի օր է որ Բուխարայի Էմիրը Թիֆլիսում է գտնվում: Օգոստոսի 30-ին նորին բարձրութիւնը հրաւիրված էր ճաշի Կառավարչապետ իշխան Գօլիցինի մօտ: Երէկ երեկոյեան Էմիրը ճանապարհվեց Բագու, որտեղից պիտի գնայ Բուխարա:

—

Թիֆլիսեցի Փրիդօնեան եղբայրները 1000 ռուբլի են նուիրել «Եղբայրական Օգնութիւն Թիւրքիայում վնասված հայերին» ժողովածուի խմբագրութեան:

—

«Եղբ. Մովսեսեան և ընկ.» ֆիրման կառավարութիւնից ստացել է Սևանի լճի վրա շրջեններ պահելու մենաշնորհը 25 տարի ժամանակով:

—

Այս տարի էլ Թիֆլիսի միջնակարգ դպրոցները, ինչպէս և անցեալ տարիներում՝ չը կարողացան մտնել բազմաթիւ աշակերտներ՝ տեղ չը լինելու պատճառով: Այսպէս, Թիֆլիսի երկրորդ և երրորդ կլասիքական գիմնազիաների ստորին դասարանները մտնելու համար քննութիւն տուին 600 երեխաներ, բայց ընդունվել են միայն 132 հոգի:

—

ԹԷՀՐԱՆԻՑ մեզ գրում են. «Գերմանիայի Վիլհէլմ կայսրը շնորհել է պարսից արտաքին գործերի մինիստրութեան առաջին թարգման Ցովհաննէս խան Մասեհեանին Պրուսիայի «Կարմիր Արծուի» 2-րդ աստիճանի շքանշանը: Այդ կարգի շքանշանի առաջին աստիճանը ամբողջ Պարսկաստանում այժմ ունի միայն Սադրազամը, իսկ 2-րդ աստիճանը պ. Մասեհեանը»:

—

ԴԵՐԲԵՆՏԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 20-ին տեղի ունեցաւ մի սարսափելի արիւնհեղութիւն, որին զոհ գնացին յայտնի վաճառական Ցովսէփ Ազարեանցը և երիտասարդ վաճառական Գինոս Դաւթեանցը: Դէպքը այսպէս պատահեց: Քաղաքիս յայտնի հարուստ Պ.-ի ընտանիքը միշտ ասելիս է եղել իր գործակատար Գինոսին, թէ այսինչ աղջիկը քեզ համար ենք ուզելու: Օրիորդը հազիւ 15 տարեկան լինի, ընակվում է Բագուում, բայց ամառվայ ամիսները գրեթէ միշտ անց է կացնում Դերբենդում: Այս ամառ, երբ օրիորդը ըստ սովորութեան գալիս է այստեղ՝ Պ.-ի ընտանիքը սկսում է խօսել արդէն նշանի ու պսակի մասին: Համաձայնութիւն են յայտնում թէ Գինոսը և թէ օրիորդի մայրը. սկսում են պատրաստութիւն տեսնել, բայց հէնց այդ միջոցին նոյն օրիորդին առաջարկութիւն է անում հանգուցեալ Ցով. Ազարեանցի որդին: Օրիորդի մայրը, որը մի 2—3 օր առաջ աղջկան տալիս էր Գինոսին՝ այժմս թեքվում է Ազարեանցի կողմը: Գինոսը, լսելով այդ բանը՝ առաջարկում է Ցով. Ազարեանցին յետ կենալ խնամախօսութիւնից, որովհետև ինքը այդ օրիորդին արդէն իր հարսնացուն է համարում: Երկուսի մէջ տեղի է ունենում սուր խօսակցութիւն ու բանը հասնում է այնտեղ, որ Գինոսը ատրճանակի մի հարուածով մահացու վէրք է տալիս Ազարեանցին: Այդ միջոցին Ազարեանցի եղբօր որդին, որ ներկայ է լինում դէպքին՝ վրա է հասնում, զարմանալի ճարպիկութեամբ խլում է ատրճանակը Գինոսի ձեռքից ու նոյն ատրճանակի հարուածով վերջ է տալիս Գինոսի կեանքին»:

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում եմ. «Բագուցիները գնացին. քաղաքը դատարկվում է: Օգոստոսի 22-ին ճանապարհվեց Բագու Հուսարի աշակերտական կօլոնիան 110 աշակերտներով: Ամառը մեզանում անցաւ խիստ բազմակողմանի ուրախութիւններով: Եղան կոնցերտներ և թատրոնական ներկայացումներ: Տենդը շարունակվում է. անձրևային եղանակներ է անում»:

—

ԵՐԵՒԱՆԻՑ հաղորդում են այստեղի ռուս լրագիրներին, որ այնտեղ այս տարի կը բացվի բէյլական դպրոց հինգ տարվայ դասընթացով: Երևանում գոյութիւն ունեցող կլասիկական գիմնազիան անկարող է լինում ընդունել մտնելցանկացողներին, տեղ չունենալու պատճառով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նոր-Զուղա, օգոստոսի 5-ին

Լսում ենք, որ մեր երկսեռ ուսումնարանների հոգաբարձութիւնը հարկաւոր է համարել առաջիկայ ուսումնարանական տարեշրջանից մի քանի կարևոր փոփոխութիւններ մտցնել ուսումնարանների մէջ: Անցեալ երկու տարիների փորձառութիւնից յետոյ զգացել է վերջապէս, որ ուսումնարանների ներքին կառավարութեան ղեկը չէ կարելի որևէ ուսուցչի ձեռքում դնել, ուստի հոգաբարձութեան անդամներից պ. Մ. Ս. Ցարութիւնեանցին (Calcutta University First arts կոչված պետական բարձր քննութիւնը յաջողութեամբ անցած է) առաջարկված է տեսչութեան պաշտօնը: Պարոնն ուրախութեամբ յանձնառու է եղել թէ յիշեալ պաշտօնը վարելու և թէ բացվելիք վեցերորդ դասարանում անգլիերէնի և մաթեմատիկայի դասերն աւանդելու ձրիապէս: Վերջին քննութիւնների ելքից նկատելով երեք ուսուցիչների անբնդունակութիւնը՝ պարտաւորված է նրանց պաշտօնից արձակել և նրանց տեղ աւելի ընդունակներին հրաւիրել:

Այս վճռական քայլը պատճառ պիտի լինի բաւական տարաձայնութիւնների և հոգաբարձութեան դէմ յարձակվելու. բայց, ինչպէս լսում ենք՝ հոգաբարձութիւնը վճռել է հաստատ մնալ իր որոշման մէջ, եթէ իսկ հարկաւոր լինի հրաժարվել: Ուսումնարանի ծրագրի մէջ մտցրված են մարդակազմութիւն և բնական ուսմունքներ: Պ. տեսուչը մեծ յոյս ունի, որ ներկայ ընդունակ ուսուցիչներով և իր անձնական հսկողութեամբ երկսեռ ուսումնարանները առաջիկայ տարվայ մէջ զգալի առաջադիմութիւն պիտի անեն:

Յուլիսի 30-ին ուսումնարանի դահլիճում տեղի ունեցաւ տեղիս որբուհիների խնամակալութեան 6-րդ տարեդարձի հանդէսը, երկսեռ խումբ բազմութեան ներկայութեամբ: Ճառեր կարդացին նախագահուհին, գանձապահը և քարտուղարը, որոնցից իմացվեց, որ մուտքի նուազութեան պատճառով խնամակալութիւնը դեռ չէ կարողացել իր գործունէութեան ծաւալը աւելի ընդարձակել: Ներկայումս ընկերութիւնը կարողանում է որոշ թիւով որբուհիների հագուստը և դպրոցական պիտոյքները հոգալ, բայց յոյս ունի, մեր առաջնորդի աջակցութեամբ և հեռաւոր ու մերձաւոր ազգականների նիւթական օգնութեամբ, ապագայում աւելի ընդարձակել իր գործունէութիւնը: Առաջնորդը մի կարճ ատենաբանութեամբ հանդէսը փակեց, որից յետոյ տեղի ունեցաւ ձեռագործների վիճակահանութիւնը, որից գոյացաւ 500 ղուռուշ:

Երեկոյեան տեղի ունեցաւ մի մանկական ներկայացում, երկսեռ մանուկներից բաղկացած, որը պատրաստել էր պ. Վարդան Վարդանեան, և որ, պէտք է ասել, կատարեալ աջողութիւն ունեցաւ: Մուտքը ձրի լինելով՝ դպրոցի դահլիճի մէջ գրեթէ միմեանց վրա դասվել էր ամբողջ Զուղան: Այժմ զանազան պատճառաբանութիւններ իսպառ վերացել էին: Այժմ եղանակը ոչ տաք էր, ոչ ցուրտ, ոչ մութն էր, ոչ աղմուկ, թատրոնը ոչ վատ էր և ոչ վնասակար: Պահանջեցէք տժմսակի գին—և իսկոյն ամեն բան կը փոխվի:

Նոր-Զուղայեցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Վօլֆի գործակալութեան» հեռագրում են Կ. Պոլսից, թէ Բ. Դրան այն չրջաբերականին, որով նա աշխատում էր, որ շրջենաւային ընկերութիւնները չընդունեն իրանց շրջենաւերում Թիւրքիա վերադարձող հայ գաղթականներին՝ այստեղի ռուսաց դեսպանը պատասխանել է, թէ հայերի կոտորածների ժամանակ Ռուսաստանը հայերին ապաստան է տուել միայն կարեկցութիւնից դրդված, և այդ պատճառով էլ նա այժմ կը պնդէ, որ նրանց քնակեցնեն իրանց հայրենիքում:

—«Temps» լրագրի Բելգրադի թղթակիցը հեռագրում է օգոստոսի 21-ից. «Նատալիա թագուհին, որը Միլան Օբրէնովիչի Բելգրադ վերադառնալու օրից ընդհատել էր իր նամակագրութիւնը իր որդի Ալէքսանդրի հետ՝ այս քանի օրերս մի նամակ է գրել Ալէքսանդր թագաւորին, որի մէջ խնդրում է նրանից, որ արմատականների կուսակցութեան մարդկանց զոհ չը դարձնէ Միլանի վրիժառու բնաւորութեան, որովհետև եթէ կռիւ լինի դինաստիայի և ժողովրդի մէջ՝ առաջինը կարող է զրկվել գահից:

—Թէև անգլիացիները նուաճել են Սուդանը, բայց, ինչպէս երևում է՝ պէտք է նորից պատերազմ հրատարակեն այնտեղ: Դէրվիշների գլխաւոր խալիֆը, որ այնքան ծանր պարտութիւն կրեց անգլիացիներից անցեալ տարի՝ նորից մեծ զօրք է հաւաքել և գրաւել է լաւ ամրացրած դիրքեր:

—Տրանսվաալի հարցը օրէցօր սուր կերպարանք է ստանում. պատերազմը անգլիացիների և բօէրների մէջ հավարեա անխուսափելի է դարձել: Եօհաննիսբուրգ քաղաքում սկսվել է յուզմունք: Բնակիչները փախչում են, վախենալով պատերազմից:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Զորս «Կ». Բերլինի լրագիրները հաղորդում են Վիլհէլմ կայսրի հետևեալ տարօրինակ կարծիքը՝ կանանց իրաւունքների և առհասարակ կանանց ազատութեան մասին:

Սրանից մէկ քանի ժամանակ առաջ Վիլհէլմ II-ին այցելում են Կիլում երկու ամերիկացի կանայք, երկուսն էլ կանանց իրաւունքների եռանդուն պաշտպաններ: Նրանցից մէկը սկսում է խօսել կայսրի հետ և նկարագրում է այն ստոր և խղճալի դրութիւնը, որի մէջ է գտնվում գերմանացի կինը:

Կայսրը լսում է համբերութեամբ և, երբ նա վերջացնում է՝ ասում է.

—«Այդ հարցում ես համակարծիք եմ կնոջս հետ: Գիտէք, նա ինչ է ասում ինձ.—նա ասում է, որ կանայք ուրիշ ոչնչով չը պէտք է պարապեն՝ բացի չորս Կ.-ից»:

—Բացի չորս Կ.-ից—բացագանչում է ամերիկացի կինը:

—Ներեցէք, տիկին, ես մոռացայ, որ դուք գերմաներէն չէք խօսում: Ահա այդ չորս Կ. Kinder, Küche, Kirche, Kleider (երեխայք, խոհանոց, եկեղեցի և զգեստներ):

Աւելորդ համարելով այլ ևս շարունակել այդ խօսակցութիւնը՝ ամերիկացի կանայք իսկոյն հեռացան:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 օգոստոսի

ԲԵԼԳՐԱԴ: Կնեժեվիչի դատը: Ցաուշանովիչ հերքում է իր վրա բարդված բոլոր մեղադրանքները: Ես դուրս եմ եկել, ասում է նա, արմատականների կուսակցութիւնից դեռ երեք տարի սրանից առաջ, և այն ժամանակվանից այդ կուսակցութեան պարագլուխների հետ ոչ մի յարաբերութիւն չեմ ունեցել: Զորս վկաներ ցոյց տուին, թէ Պօմարեվացուս, պարկի մէջ, Պաշիչ երկու գիւղացիների ներկայութեամբ ասեց. «Մի անհանգստանաք, շուտով Սերբիայում տեղի կունենայ լուրջ դէպք: Բարևեցէք մերոնց. ասացէք, որ պատրաստվեն»: Պաշիչ հերքում է, որ պարկում եղած լինի:

ՊԱՐԻԶ: «Figaro» լրագիրը կարծում է, որ Դրէյֆուսի բողոքը կը մերժվի:

31 օգոստոսի

ՊԱՐԻԶ: Սեբաստիան Ֆոր ժամանակաւորապէս ազատված է բանտից: Շաբաթ փողոցում ամեն ինչ առաջվան նման է: Դէրէն խոստովանեց, որ իր մօտ միայն երկու օրվայ ուտելիք է մնացել:

ՐԷՆՆ: Զինուորական դատարանը սառագրեց խնդիրք՝ Դրէյֆուսին ատիճաններից զրկելու դատավճիռը ջնջելու մասին: Խնդիրքը կը յանձնվի հանրապետութեան նախագահին իբար-

խիսական կարգով։ Դրէյֆուս, որին յայտնվեց այս մասին՝ շատ զգածվեց և յայտարարեց, թէ բարի յոյսեր ունի։

ՊԱՐԻԶ։ «Temps» յոյս է յայտնում, որ Լուբէ կատարգրէ ներում Դրէյֆուսին և որ այդ վճիռը կը տայ Ֆրանսիային անհրաժեշտ խաղաղացում։

«Dépêche de Toulouse» տպում է խօսակցութիւն մայոր Կարրիէրի հետ, որի մէջ Դրէյֆուսին մեղադրողը յայտնեց, թէ Դրէյֆուս արդէն անց է կացրել աքսորի հինգ տարին, և ինքը ոչ մի անյարմարութիւն չէ տեսնում, որ այդ ժամանակը այժմ հաշուի առնուի։ Կարրիէր ենթադրում է, որ Դրէյֆուսին ներումն կը շնորհվի։ «Սա կը լինի, ասում է նա, ամենալաւ միջոցը ագիտացիան վերջացնելու համար։»

ԳՕՏՏԷՆԲՈՒՐԳ։ Նատգօրստի շոգենաւը, որ գնացել էր Անդրէին որոնելու Գրէնլանդիայի արևելեան ափերում՝ այսօր տեսնվեց Սկագէնի արևմտեան կողմում մի լօցմանի նաւակից։ Նադգօրստ ոչ մի տեղեկութիւն չէ բերել Անդրէի մասին։

ԲԵԼԳՐԱԴ։ Կնեժեվիչի գործը։ Մեղադրվող Ստօյան Գրօպիչ, պատասխանելով մեղադրանքներին՝ նախ և առաջ բացատրեց հարկ վճարելու պարտաւորութեան թէօրիան և սկսեց ապացուցանել, թէ հարկ վճարելուց հրաժարուիլը դեռ չէ պարունակում իր մէջ պետական դաւաճանութիւն։ Ապա մեղադրվողը յայտարարեց, թէ Գրեզովիչի հետ ինքը ծանօթ չէ. Նիկոլիչի հետ երբէք յարաբերութիւն չէ ունեցել. Տաուժանովիչի հետ լարված յարաբերութիւնների մէջ է գտնվում. Տավիչի հետ բոլորովին ոչ մի յարաբերութիւն չէ ունեցած։ Նրա առաջին դատապարտութիւնները չեն կարող այժմ փաստ դառնալ նրա դէմ. որովհետև այժմեան կառավարութիւնն էլ առաջարկել է իրան զանազան կարևոր պաշտօններ, որոնք սակայն ինքը մերժել է։ Տպարանատէր Ստանոյեվիչ վիճում է իր վրա բարդված մեղադրանքների դէմ։ Ինքը դատապարտված է եղել 1883 թվի ապստամբութեան համար, բայց Միլանից ներումն է ստացել և ոչ մի առիթ չէ ունեցել Միլանի դէմ որևէ բան ձեռնարկելու։ Ընդհակառակն ինքը շնորհակալութիւն է զգում դէպի նա։ Ստանոյեվիչ մերժում է Գրեզովիչի ցուցմունքները իր դէմ՝ ինչպէս ստութիւն։ Գրեզովիչ սակայն պնդում է իր ասածը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. Ա. Ի. կը տպագրենք իբրև նաւակ խմբագրութեան՝ եթէ դուք հաճաձայնվէք դնել ձեր ամբողջ ստորագրութիւնը։

Ժամանակաւոր խմբագիր՝
ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱԽԱՆԵԱՆ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՀԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ
ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ
Ա. ՏԱՐԻ
Ցարմարեցրած ներկայ պահանջներին։
1—4 Սահակ քահ. Սահակեանց

ԵՂԲԱՐՔ ՅԱՐՈՒԹԻՒՆ, ԳԷՈՐԳ և ՍԱՐԳԻՍ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑՆԵՐԸ պատիւ ունեն ծանուցանելու ընդհանրութեան, որ սոյն օգոստոս ամսից Թիֆլիսում, Սիօնի փողոցի վրա, Յովնանովի քարվանսարայում բացել են ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքների գումարածախի վաճառատուն (оптовый складъ)։
(չ. ո.) 4—5

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը յայտնում է, որ սեպտեմբերի 10-ին, յերեկվայ ժամի 1-ին, Վարչութեան բընակարանում նշանակված է աճուրդ կապալով տալու քաղաքային լապտերների համար 12000 պուդ նաւթի հայթայթումը։

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմանների հետ ծանօթանալ վարչութեան դրասենեակում ամեն օր, բացի տօն և կիրակի օրերից, առաւօտեան ժամի 9-ից, մինչև 12։
2—3

Սրանով պատիւ ունենք յայտնելու ի գիտութիւն, որ „А. С. Меликовъ и К°“ նաւթարդիւնաբերական ընկերութիւնը, որի կանոնագիրը արժանացած է Բարձրագոյն հաստատութեան սոյն տարու յուլիսի 2-ին՝ սկսել է իր գործունէութիւնը։

Ընկերութեան հիմնական դրամագլուխը երկու միլիոն ռուբլի է։ Ակցիոներների առաջին ընդհանուր ժողովում, որը կայացաւ այս տարվայ օգոստոսի 11-ին՝ վարչութեան տնօրէններ ընտրված են, Համբարձում Սարգսեան (նախագահ), Քրիստաֆոր Սարգսեան Անտոնեան և Յովհաննէս Անդրէասեան Մելիքեան, և նրանց կանդիդատներ՝ Թովմաս Սարգսեան Մելիքեան և Պատուական Գերասիմեան Մարգարեան։

Վարչութիւն „А. С. Меликовъ и К°.“ նաւթարդիւնաբերական ընկերութեան Բագու։
1—2

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հարիւրի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամեն այր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Քրիլովովի տանը № 9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղը. Ծօվինովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 20—25

М. 75287 (17)

ԵՐԱՆՈՒՀԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(ԹՆԴ. ՅՈՎՀԱՆՆԷՍՅԱՆ)
Մասնաւոր դպրոցում եւ Մանկական պարտիզում
աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 20-ից, պարապմունքը՝ սեպտեմբերի 1-ից։ Երեխաներն պատրաստվում են գիմնազիայի, ռէալական և այլ միջնակարգ դպրոցների համար։ Садовая (Бебутовская) № 38։ 3—8

23—52 М. 35,967 (չ)

(չ.) М. 59,806

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ—ՊԱՆՍԻՕՆ
ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ
Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթևեկ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստում է գիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմլէմէրների, ռէալական և այլ ուսումնարանների համար։

Փոքր պատրաստականում երեխաները ընդունվում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած։ Ուսումնարանում ուսուցանում են լաբորագրոյն ուսումն աւարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ։ Աւանդելի առարկաներն են—կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն (ռուսաց և ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն։

Հասցէն. *ТИФЛИСЪ, Гановская ул., № 11.* 3-րդ գիմնազիայի մօտ։
(չ) 1—10



ՅԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ
Իսժեևեր Ն. Բ. Պասսէկի
Тифлисъ, Михайловская ул. № 116.
Հասցէն հեռագիրների համար. *Тифлисъ—Пассеку.*
ՏԵԼԵՖՕՆ № 642.



ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԶՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՒՐՕՆ ՅԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ
ԳԱԶԱ-ՇՈԳԻԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրոտէխնիական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տելեֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԵՑԻԱ և ՏԱՔՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
տիւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տնակներ։

ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. Հ. Շ.) 31—100

Միլիոնատեր Ռոթշիլդ
Ամերիկեան Ռոթշիլդ
Ամերիկեան Ռոթշիլդ
Ամերիկեան Ռոթշիլդ
Ամերիկեան Ռոթշիլդ
Ամերիկեան Ռոթշիլդ
Ամերիկեան Ռոթշիլդ
Ամերիկեան Ռոթշիլդ
Ամերիկեան Ռոթշիլդ
Ամերիկեան Ռոթշիլդ

Ի. Դ. ՍԱԼՏԻԿՕՎԻ
ԱՐԾԱԹԵԱՑ ԻՐԷՂԷՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ
Москва, Земляная ул. близъ Серпуховской заст. свой домъ.

Ծախվում են բաւականաչափ էժանացրած գներով զանազան արծաթեայ իրեղէններ, որոնք մնացել են խանութը փակելուց յետոյ. սերվիզներ, գինու բաժակներ, պօրտսիգարներ, անձեռոցիկների օղակներ, գրասեղանի իրեղէններ և զանազան գեղեցիկ իրեղէններ պարգևների համար։ Պատուէրները կատարվում են ճշգրտութեամբ և խղճմտանքով, իսկ վաճառականների համար մեծ զիջում։ Նմուշի համար փայլուն՝ և էմալի հասարակ ապրանքները ուղարկվում են վերադիր վճարով։ Бен. 22486։ 3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Августа 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.